



ՄԱՐԿԱԿԱՆ ԵՐԱՅԻՆ

ՉԱԲԱԹԱԹԵՐԹ

Բաժանորդագին՝ 10 լր. արևիկան

Հասցե՝

Ред. на в. " ВЕРАДЗНУТІОНЪ " .— Рѹѳѳ

Рѳд. du jour. " VERADZNOUTIOUN " Roustchouk

ՀԱՄՐԻ ԵՒ ՈՐՍՈՐԴԻ

ԹԱՂՄԱՆ ՀԱՆԴԵՍԸ

Արդէն յայտնի է ընթերցողներին, որ ամսիս 4-ին ոճրագործի գնդակներին զոհ գնացին Հնչակեան Կուսակցութեան անձնուէր և կարող ընկերներից երկու հոգի՝ Արամ Գրիգորեան (Համր, Պատգամաւոր Բանուր, Նոր-ժապուտ և այլ Մասնաճիւղերի) և Տիգրան Իզմիրեան (Որսորդ, Պատգամաւոր՝ Նաւահան գիստ և Ծխախոտ Մասնաճիւղերի)։ Ապագային թողնելով մեր թանկագին և անմուսայ ընկերների մանրամասն կենսագրութիւնը, հագորդում ենք միմիային նրանց թաղման պարագաները, քանի որ սպանութեան մանրամասնութիւններն արդէն յայտնի են «Վերածնութեան» ընթերցողներին։

Արդէն պ. Սաղունու սպանութիւնը, նոյնպէս և մեր երկու ընկերների դէմ կատարուած սոսկալի դէպքը ահագին իրարանցում և ազմուկ հանց թէ՛ մամուլի և թէ՛ հասարակութեան մէջ։ Անդ լիակա՛ն բոլոր թերթերը, շարժաթիւթերը շաբաթից ի վեր շարունակ զբաղուեցին հանդուցեալ ընկերների սպանութեան մանրամասնութիւններով և շարժաթիւթներով, նահատակների պատկերները և սպանութեան տեղն ու այլ պարագաները լոյս ընծայելով։ Երկու զոհերը գեռ երիտասարդ, գեռ թարմ և Կուսնորիական շահերին հոգւով և նարմնով անձնատուր եղած անկեղծ գործիչներ՝ դաւադրութեան, տմարգի դաւաճանութեան զոհ գնացին օտար աշխարհում, հեռու սիրելիներից, ծնողներից ու մերձաւորներից։

Թաղումը տեղի պիտի ունենար ամսիս 12-ին, հինգշաբթի օրը, կէս օրից յետոյ, ժամը 2 1/2-ին, այդպէս էլ յայտարարուած էր բոլոր լրագիրներում։ Սակայն, չնայած սրան, ամսիս 10-ին, երեքշաբթի օրը, երեկ հաստատւով յայտարարութեան, հապարաւոր քանակութեամբ հա-

մակիր ժողովուրդ էր խոնուել Կուս. Կենտրոնավայրի առաջ ձգուած փողոցը, մինչև գերեզմանատուն։ Ստիկանութիւնը, շրւարած ժողովրդի այսպիսի ծայրայեղ համակրութիւնից դէպի դաւադրութեան զոհ գնացած մեր ընկերները, և նախատեսելով, որ անհնարին կը լինի՝ հաղարաւոր և տասնեակ հազարաւոր հանդիսականների ու համակրողների ներկայութեամբ թաղման ժամանակ տեղի ունենալիք դժուարութիւնների և պատահականութիւնների առաջը առնել, պահանջեց գաղտնի թաղել, առանց մամուլին յայտնելու, ամսիս 12-ին, առաւօտեան ժամը 9-ին Սակայն մենք ոչ մի պարագայի տակ չըկամեցանք այդպէս վարուել, այլ հազիւ յաջողեցրինք ժամը 10-ին թաղելու թողնուելիս ստանալ։

Չնայած որ բոլոր թերթերում յայտարարուած էր թէ երկու հոգի՝ Համրի և Որսորդի թաղումը տեղի պիտի ունենայ նոյ. 12-ին, կէս օրից յետոյ, ժամը 2 1/2-ին, չնայած նաև, որ շատ լրագիրներ հաղորդել էին, թէ երկու զոհերի թաղումը տեղի է ունեցել գիշերով, գաղտնի կերպով—այնուամենայնիւ հինգշաբթի առաւօտեան ժամը 9-ից ըսկրած հաղարաւոր ժողովուրդ էր խոնուել Հնչ. Կուս. Կենտրոնի առաջ ձգուող փողոցում՝ մինչև գերեզմանատուն։

Նշանակեալ ժամին սգակառքերը Կենտրոնի առաջ կանգնեցրին նահատակ ընկերների դագաղները։ Անդ լիակա՛ն ժողովուրդը առանձին համակրանքով, ցաւակցութեամբ և խորհրդաւորութեամբ էր նայում օտարութեան մէջ ոճրագործ ձեռքերի զոհ դարձած նահատակների սգազգեստ գագաղների վրայ... Տեսարանը չափազանց սրտաշարժ և մորմոքիչ էր... Այդ ժամանակ Կուս. Կենտրոնից դուրս բերուեցան և դրուեցան դագաղների վրայ 9 հատ շքեղ և գեղեցկահիւս պակներ՝ արուեստական և բնական ծաղիկներից։ 1) Կենտր. Վարչութիւնից՝ «Իրենց քաղ և սիրեցեալ ընկեր Արամ

Գրիգորեանին», 2) «Բանուր», «Մուրադ» և այլ Մասնաճիւղերից՝ «Իրենց թանկագին և սիրեցեալ ընկեր Արամ Գրիգորեանին», 3) «Իւր թանկագին և սիրելի ընկեր Արամ Գրիգորեանին» մի ընկերից, 4) «Իրենց սիրեցեալ և կարօտալի Արամ Գրիգորեանի տնմուսայ յիշատակին՝ երկու անգլիացի ընկերներից», 5) «Անմուսալի և թանկագին Համրին» երկու անգլիացի համակրողներից, 6) Կենտրոնական Վարչութիւնից՝ «Իրենց քաղ և սիրեցեալ ընկեր Տիգրան Իզմիրեանին», 7) «Նաւահան գիստ և Ծխախոտ Մասնաճիւղերից» «Իրենց քաղ և սիրեցեալ ընկեր Տիգրան Իզմիրեանին», 8) «Իւր սիրելի և քաղ ընկեր Տիգրան Իզմիրեանին» մի ընկերից, 9) Տիգրան Իզմիրեանի անմուսայ յիշատակին՝ մի անգլիացի բարեկամից։

Պակները սգակառքերի վերայ դնելուց յետոյ, մնացած սըգաւոր ընկերները՝ կառքերով, հաղարաւոր բաղմութեան, գաղտնի ու հասարակաց հետեակ և հեծեալ ոտականների ուղեկցութեամբ, յամբընթաց գնացքով ուղևորեցան դէպի գերեզմանատուն, առջևից ունենալով սգակառքերը։ (Ստիկանութիւնը, զգուշութեան և ամենայն պատահականութիւնների առաջն առնելու համար, խորհուրդ տուեց, ըստ հայկական սովորութեան, պակները առջևից ձեռքով շատնել, ու զգաղների վրայ դնել)։

Տարագէմ թափորը հասարակագիտական եկեղեցին։ Եկեղեցու կրօնական կարգը կատարեց անգլիական քահանան, որովհետեւ Մանչեսթրից հեռագրով հրաւիրուած հայ քահանան յայտնել էր, որ հիւանդութեան պատճառով անկարող է ներկայ լինել և թաղման կարգը կատարել։ Կրօնական պատշաճ ձեւը կատարուեց յետոյ՝ անգլիական քահանան մի ազգու և որտաուսչ գամբանական խօսեց, իմիջի այլոց յորդոր կարգաւով անգլիական ազգին, որ հայերին՝ իբրև քրիստոնեայ ճշուած ժողովրդի՝

օգնութեան ձեռք կարկառեն, տաճիկ կառավարութեան լծից ազատուելու համար։ Այնուհետեւ երկու անմեղ զոհերի գագաղները ընկերները և յուղարկաւորները ուսերի վրայ գրած՝ դէպի գերեզման տարան և հողին յանձնեցին՝ խուռն բաղմութեան և համակրողների ներկայութեամբ։ Տեսարանը վերին ստիճանի սրբոտաշարժ էր...

Ընկերները և բարեկամները հազիւ կարողանում էին զսպել իրենց արտասուքները, որի մասին չէին մուսցել նաև անգլիական թերթերից ոմանք։ Ոգազգեստ ընկերներից երկուսը՝ Վ. Ալասեան և Բ. Յովհաննէսեան, խուոված հոգւով և արտասուալից աչքերով, ազգու և որտաուսչ դամբանականներ խօսեցին, որոնցից անգլ. թերթերը թարգմանաբար քաղածներ էին արելու Պ. Ալասեան հակիրճ կերպով, իմիջի այլոց, ըստ... տասնեակ տարիներից ի վեր հայ ազգը տուել է 300,000 զոհեր իր ազգի Ս. Դատին համար։ Մագունու և այս վերջին երկու անմեղ զոհերի մահովը՝ այդ վիթխարի թիւի վրայ աւելացաւ երեք և ու Չնայած այն հանգամանքին, որ վերջին զոհերը տեղի են ունենում մեր անհարազատ պատակների ձեռքերով, բայց և այնպէս չարիքի բուն արմատը գտնուում է սահակական տիրող ըէժիմի մէջ, որը ոչնչացնելու համար կուժողների շարքերում սպրդել են յայտնի Աթաբեկտ կոչուած տաճական անարգ գործակալները, որոնք մի առանձին շանքով ու թափով այժմ էլ երևան են բերում իրենց քրտմեկի արարքները, յուսաւոր ու ազատ աշխարհի գլխաւոր կէտերի վրայ, կրկնակի նպատակ ունենալով թէ՛ տանջուող հայութիւնը և մահաւանդ նրա յեղափոխական շարժումը զրկել այդպիսով քաղաքակիրթ եւրոպայի համակրութիւնից եւ թէ՛ նոյն շարժումը իր պայքարող զինւորներից։ Որքան և մեր զայրոյթը խիստ լինի գէպի այդ զրուելի ոճրագործ խրմբակը, այնու ամենայնիւ, մենք

Հեռու ենք մնում նրանց օրինակին հեռակույց, և շեշտում ենք, որ նրանք իսկապէս կարեկցութեան արժանի են, որովհետեւ իրենք ալ չեն իմանում թէ ի՞նչ են անում: Հայութեան և հայ Յեղափոխութեան այդ հակառակորդները անկարող պիտի ըլլան ազգային եղբայրասպան սիսեմ մեջ մեր էներգիան և մեր ոյժը թուլացնել: Նրանք չարաչար սուխարում են իրենց այն թաղուն նպատակի մէջ էլ թէ՛ այդու պիտի կարողանան զրկել հայ Յեղափոխութիւնը Եւրոպայի համակրութիւնից, որովհետեւ տարիներէ ի վեր Եւրոպան, մանաւանդ անգլիացիները շատ քաջ և ճանաչում հայութիւնը և հայ Գաղթը յայտնի քաղաքագէտ Կլաւտտոնի վկայութեամբ: Յետոյ պիտի ծագանեն սեպտեմբերի 1914-ի ճակատամարտի արդեւորական շեշտներով որակեց եղբայրասպանութեան քստմնելի սրտամբը, ակնարկ ձգեց հայ ժողովրդի ստակալի տառապանքները վրայ Տաճկա-Հայաստանում և գրուած լով մեր թանկագին ընկերների բարեմասնութիւնները՝ վերջացուց իր սրտայոյզ դամբանականը սախաքերով: «... կերպնունք յանուն հայ Յեղափոխութեան և հայ ազգի Ս. Գատին, որ պիտի շարունակենք քայլել ա՛յն ճանապարհէն, որ ձեզ համար թէև փշոտ, բայց քացր էր, և մեր բոլոր ոյժերով պիտի ձգտինք՝ ինչպէս մեզ, նոյնպէս և ձեզ համար նուիրական եզրով վսեմ՝ նըպատակի իրազորման համար, թէկուզ բոլոր ալ զոհուինք սնորհաբանների գնդակներին: Ապա ընկերները և բարեկամները տըխուր և վշտաբեկ սրտով հրաժեշտ տուին իրենց նահատակ ընկերներին և արտասուքը աչքերին՝ նոյն կերպով յետ դարձան տուն խուռն բազմութեան միջից:

Ա Ա Ն Ա Մ Ի Ր Ա Կ Ա Ն 21

ԱՆԻԹԱՆՈՒԹԻՒՆԸ
ՅՅՅ ՅՅՅ Ի
Քարգանկեց ճանապարհին
Ա. Տեան

ԻՇԽԱՆԱԹՈՒՆ ՄԵ ՀԱՐԿԱՒՈՐ Է

Ուրեմն կազմակերպութիւնը և կանոնադրութիւնը հարկաւոր են: Թեթիւներ իր գանձերը կը յանձնէ միայն աշխատանքի, գլխաւորապէս հասարակական աշխատանքի: Ինտուստրիական մեքենականութեան դարգանալէն ի վեր մասնաւոր, գործակցութիւնը, կեդրոնական ղեկավարութիւն մը, իշխանութիւն մը անհրաժեշտ դարձած էն:

Ի՞նչ պիտի ըլլայ մեր արդիւնաբերութիւնը, եթէ մանողը ի նկատի առնենայ ոտաւազանիկ աշխատանքի ոյժը, եթէ խոհարարը հաշուի չառնէ կոչնականներու թիւը:

Մէկը կուզէ պատ մը շինել կամ մուրջի մը համար, որ պէտք չէ, կամ այնպիսի սեղ մը՝ որ անյարմար է:

Ճաշից յետոյ, ժամը 21/2-ին, սրպէս յայտարարուած էր լրագրորեն թաղման ժամը, հազարաւոր ժողովուրդ էր հաւաքուած կենտրոնի առաջ ձգուող փողոցի վրայ՝ մինչև գերեզմանատուն: «... Չնայած ոտիկանութեան յայտարար խնդրի, թէ հայ զոհերի թաղումը տեղի է ունեցել յարգէն, այնու ամենայնիւ խուռն և հոծ բազմութիւնը չէր կամենում հաւատալ և ժամերով մնաց տեղը սեւեռած՝ հետզհետէ ստուարանալով և բազմաթիւ: Եւրոպայի և գաղթական համակրութեամբ թանկագին ժողովուրդը ժամերով կանգնելուց յետոյ միայն սկսեց ցրուել, համոզուելով որ իզուր են սպասում այլևս: «... Ճիշդ տպաւորութիւն էր թողնում այս բոլորը: միւս կողմից միտիթարական էր տեսնել, թէ որպիսի համակրանքով և յուսակցութեամբ է վերաբերում թէ՛ անդ լիական ժամուրը և թէ՛ ժողովուրդը գէպի կուսակցութեան ծանր կորուստները՝ և ընդհանրապէս գէպի հայ ազգը: Եւ այսպէս վերջերս կուսակցութեան պատահած դժբախտութիւններից յետոյ՝ երկու կարևոր ուժեր և սնորհաբոծի գնդակներին զոհ դա՞նան. մէկը՝ Արամ Գրիգորեան, բոլորովին ծաղիկ հասակում, կրթուած և մեծ ապագայ խոստացող, ընկերներից անչափ սիրուած և պաշտուած միտրիտասարգ, և Տիրան Իլմիրեան՝ իբրև կուսակցական հերոս զինուոր, որ Քեռիի հետ անթիւ սըլաբագործութիւններէ գործելիք սիմի լեռնաշղթաներում, ծանր հաջողածներ և կորուստներ պատճառելով հուշակաւոր Զեքի փաշայի շորթորդ զօրաբանակին:

Ընկան մեր պաշտելի ընկերները, սակայն մենք անյողողող և անսասան հաւատքով կերթանք

այն ճանապարհով, որ ընտրել էին նրանք, և բարձր կը պահենք այն նուիրական դրօշը, որ սուրբ է բոլորիս համար: «... Հանգի՛ր սոսկաբնակից, անմոռաց, թանկագին ընկերներու կողմն ընկեր Ընկեր

ԿԵԱՆՔԻ ՀԱՎԱՍՏԻԹԻՒՆՆԵՐԻ

IV.

Բուլղարիայի Գաշնակցականները մի շարքից մեծ յեղափոխործ կատարելու յետեւ են. ահա ինչ արդիւնքով ու իրաւանցումով նրանք թեմակալ առաջնորդ են ընտրուած: Նոյն տեղապահն աշխատանքի մէջ են և Ատրպատականի Գաշնակցականները, սրբանք էլ ճիշդ են թափում: Երկու տարի առաջ իրենց ընտրած թեմակալ առաջնորդին պաշտօնանկ անելու: Եւ այն աստիճան խիստ է մաքաւուծւոյ, որ յատուկ պատգամաւորներ են ուղարկել — և այն էլ կանանց սեռից — վեհապառ կաթողիկոսի մօտ: «... Յիրաւի որ մեծ յեղափոխործ են կատարում Գաշնակցականները:

— Վառեայի Գաշնակցականներն էլ ոճարժուածի միջոցով (No 555) շատ իրաւացի կերպով կշտամբում էին այն հանգիստաներին, սրտնք, միշտ ղեկավարուելով անձնական շահերով ու կիրքերով, գործիք են դարձնում ժողովրդի միամիտ տարրերին և նրանց մըրում են փողոցային անկարողութիւններով ցոյց անել թագալիստութեան դէմ: Իսկ թաւրիչի Գաշնակցականները, հէնց նոյն օրերում, երբ այդ կշտամբանքն էր խմբագրում, ունեւրապիտաներիս գերի մէջ մտած, զանազան թուույնիկներով ու մասնաւոր ժողովներով, կատարելի կերպով գրգռում էին զպրոցա-

կան 10-16 տարեկան աշակերտներին ամենախալախառակ անկարգութիւններ անել ժողովրդից ընտրուած հողաբարձութեան և սոցա հրաւիրած նոր տեսչի և սուսուցչական խմբի գէմ, պահանջելով որ տեսչն ու սուսուցչները անպատճառ դաշնակցականներ լինեն: Ինչով քացաղիկ գաշնակցականների մէջ տիրող կարծիքների ու մտքերի ալյո-հակասութիւնը: ապակենտրոնացման սիստեմով, եթէ ոչ պարունները ի պահանջել հարկին կարող են և խրատներ կարող անպիտաններին և անձնական շահեր փնտրող անպիտաններ դաւնալ, ինչ էլ լինի, լուռ՝ ենք որ չընտրելու դաշնակցականների յառաջացրած այդ անհարկութիւնների մինչև այսօր էլ թաւրիչ լիլուա թաղի ու սուսնաբանը գեղափակ է:

Մեմբրսոնեղ

ՆԱՄԱԿ ԴՈՒՄԱՆԻԱՅԵՆ

Նազրմա — Ալֆարիտաներու կողմէ նախապէս ծրագրուած ու ճիշդները երբ սկսան հետզհետէ գործադրուել՝ առանձնական թերթերու ստացած հեռագրերն ընդհանրապէս հայ գաղութը օրը օրին այդ շարաքստորիկ լուրերը սրտի դառնութեամբ կը լսէք:

Մե՛ծ էր մասնաւորապէս Հընչակեան ընկերներու և զաղթականութեան զգացած ցար: Երկուակայեցեք, խու՛՛ր խու՛՛ր հայեր, — որոնց մէջ կը գտնուէին նաև կիներ, — արցունքոտ աչքերով կը գիւմէին պէտք եղած անձերու՝ իմանալու համար այդ սեգութեան իսկութիւնը: Բայց ուղիւստաբար, սա՛ էր եղած իրենց ստացած պատասխանը: «Այո՛, Սագունի. Գրիգորեան և

նախնարիկ ըլլար երկաթուղի մը: Եւ մտնողները պիտի ստիպուին ընդունել հետեւաբար ևս հոնեցիկ մեծ քանակութեամբ եկած շուքը՝ թուրքերու և ողորդմանը զինթարկուելու համար:

Ի՞նչ անխորժուրդ գաղափար է թողուլ մարդու քանաճարին թուրքերու և ճանապարհներու շինութիւնը, երկաթուղիներու կառուցելը: Ինչը, մեքենաներու ղեկավարութիւնը, կոյուղիներու նորոգութիւնը և յազարներու լուստարութիւնը, այն ամէն փէջ որ մէկուէն օգտակար կը ըլլայ իսկ միւսին վնասակար, նոյնիսկ հարեւուր մարդկանց մաս պատճառել: Եթէ մէկը ուզէր քաղիկ խակ պատուիները, արժատասիլ լինել ծառայութիւնը, օրը հանել կաշտով մը, սեւէ իշխանութիւն չպիտի կրնար ուրեմն ասոր արգելք ըլլալ:

Ուե՛՛ իշխանութիւն չպիտի կըրնայ որդիլիլ դայն անտուտանելու լեռները, փճացնելու դաշտերը և աւերելու արուտակի հրաշալիքները: Հըր-գիւնները անտեղն ալ գնձատական նախաձեռնութեան կուղին թողուլ, որ վատագի պատու կատարը վարելու կարող մարդիկ և ջրանները գործածելու կարող հրէջները չընեն:

Այս պարտագին մէջ, ինչպէս նաև ուրիշ անանօրինակ պարտաներու մէջ, կարգաւորելու և ղեկավարելու նախնական փորձեր անհրաժեշտ չեն:

Հոն՝ ուր երկու մարդ կը ձգտին միեւնոյն նպատակին, աշխատանքը գործադրելու համաձայնութիւնը և պայմանադրութեան հաստատութիւնը հարկաւոր են և սուրեմն պէտք է որ այն կամ այն կերպով իշխանութիւն մը գոյութիւն ունենայ, ջիւթէ չուգուելիք աշխատութիւնը անկատար թողուլ:

Կատարելու համաձայնութիւն չստացած պատճառով է որ նոյնիսկ երկու քարեկաններ, համոզքի ճամբորդութեան մը միջոցին, միեւնոյն կարծիքէն ըլլան իրենց հետեւելիք ճամբուն, բարձրանալիք լեռներուն և այցելելիք շէնքերուն վրայ: Նոյնիսկ ստանկ պարզ պարտագին մը մէջ, կը պատահի որ երկուքէն մէկը հրամայէ կամ առաջնորդել և միւսը հնազանդիլ:

(Շարունակելի)

իմաստով ալ գրեցի «Իրաւունք»
ին, օգոստոս 10 թուականով :
Բայց այդ նամակը բոսթանի ձեռ-
քէն անմիջապէս յետոյ Եղիպտոս
սէն այստեղ եկաւ մեր հին ըն-
կերներէն մէկը, որ ինծի իմա-
ցուց թէ Լօնտօն պատգամաւորա-
կան ժողով գումարուելու վրայ է :
Եւ թէ Եղիպտոսի պատգամաւորն ալ
հոսկէ անցեր է երթալու համար :
Այն ատեն հարկ տեսայ որ գոր-
ծը պաշտօնական և օրինական
ձեռք վերածեմ, ուստի փոխանակ
տեղեկագիրս ձեռք խրկելու, ահա
կը պահանջեմ որ մեր Վարչու-
թեան տեղեկագիրը լուրի Լոն-
տօն հաւաքուողները այս պահան-
ջումիս կամ հաստատական պա-
տասխան պիտի տան, կամ ժըլա-
տա՛ն : Եթէ հաստատական պա-
տասխան տան, ան ատեն կամ ես
Լոնտօն կ'երթամ (եթէ ճանապարհ-
համարս վճարեն) կամ պարզա-
պէս տեղեկագիրս կը խրկեմ :
Այսքանը ինծի կը բաւէ : Իսկ
եթէ իմ տեղեկագիրս իսկ լսել չու-
զեն, այն ատեն թէ ամբողջ Կու-
սակցութիւնը և թէ ազգը պիտի
զարմանան : Շատ բան գաղտնի
պահելու ձգտումը յայտնի պիտի
ըլլայ : Բարոյական վարկաբեկու-
թիւնը անխուսափելի է այն ա-
տեն, անոնց որ այդ լուր թիւնը
կը դաւեն : Աւերակ ես մեր հա-
մարատու թիւնը հրատարակեմ,
այն ատեն զիս մեղադրող մը պի-
տի չգտնուի :

Հարկ է նաև ըսել, թէ ինչ
անլուր գաղտնիքներու յայտնու-
թիւնը սպասելու չէ : Օրինաւոր
րապէս կատարուած գործողու-
թիւններ են, ամէնքն ալ պաշ-
տօնական կերպով, և Պատգամա-
ւորական ժողով մը չեմ կարծեր
թէ զանոնք դատապարտէ : Բայց
ամէն պարագայի մէջ, եթէ դատա-
պարտելի գործեր կան, չկարծուի
թէ ես անմեղ պիտի ելլեմ և ու-
րիշները պիտի դատապարտուին :
Հասնօրէն մենք իւրաքանչիւրը
իր աւելի կամ նուազ ծանր պա-
տասխանատուութեան բաժինը
կուեննայ : Բայց ինչ որ ամենա-
դատապարտելի է Բարազեան—
Արզուեան նենգամտութիւնն է,
անբարոյականութիւնն է որ օրէ
օր աւելի երևան կուգայ Բա-
բազեանին նամակներուն հրատա-
րակութեամբը :

Ես շատ կը վախնամ թէ Մա-
կեդոնական խնդրին ելքը մեզի
համար աղիտաբեր ըլլայ : Մա-
կեդոնական հարցը կարգադրուի,
ու Հայաստան երեսի վրայ մնայ
Մեր Ազգային էն ծանր կացու-
թիւնը պիտի երևան գայ : Եւ
ինչ պիտի ընէ այս դժբաղդ,
խեղճ ժողովուրդը որ տէր տի-
րական չ'ունի, ո՛չ գլուխ կայ,
ո՛չ առաջնորդ : Եւ այդ օրուան
համար է որ մենք մեր պարտակա-
նութիւնը պիտի սկսինք կատարել :
Ծանր դժոյգակ կացութիւն մը կը
վախցուի : այդ օրը նորէն իրար
թերևս գտնենք : ու պիտի տես-
նուի թէ այս վերջին տարիներ-


րուս մէջ որոնք եղեր են անչա-
հախնդիրները, ճշմարտապէս ազ-
գին բարիքը ուղղորդները, քաղա-
քական հեռատեսները : — Բայց
դեռ յոյս մը ունենանք որ թե-
րևս մեզի համար ալ Եւրոպայի
մէջ մտածող մը գտնուի : Այս
յոյսը շատ թեթեւ է :

Առ այժմ չեմ խօսիր մեր
ներքին գործերուն վրայ : Ինչ-
նակցականներուն հետ Միութիւնը
եզա՞ն իմ հրատարակումս : Պարկու-
հատուածները ինչո՞ւ խզուեցան :
— Բայց ինչո՞ւ միացան : — Ենն-
գամութիւնը ուրիշ հետեւանք
չէր կրնար ունենալ : Արիւն վա-
զեց, վերադարձներ եղան ու
մնանողներ : Բայց ինչո՞ւ 1896
էն յետոյ երկու կողմէն ոչ մէ-

կուն քիթը արուեսցաւ : Միթէ
կրբերը նուա՞զ գրգռեալ էին :
Ինչո՞ւ Նազարէկեան 1896-ին
անմիջապէս աներևոյթացաւ երբ
ձեռքը 3,000 անգլիական սոկի
կար ու կուսակցութեան մամուլը
եւ ինչո՞ւ հիմակ երեք թերթով
յանկարծ կը վերբեկին : Ինչո՞ւ
Դաշնակցականները իմ օրովս եր-
բէք բացարձակօրէն չ'մեծեցին
«Միութիւնը», միշտ պատրուակ-
ներ առաջ քշեցին սուանց օս-
կայն երբէք համարձակելու բա-
ցարձակօրէն Միութիւն չուզել :
Իսկ հիմակ կ'արհամարհեն : Աւ-
երկու հասուածիս խնդիրը :
Մենք ինքզինքնիս միշտ Հնչակ-
եան կուսակցութիւն հռչակած է-
ինք, ու յետոյ պաշտօնապէս ե-
լանք ըսինք թէ «հասուածս ենք» :
Հիմակ «հասուածք» ինչպէ՞ս նու-
րէն ամբողջութիւն պիտի նկատ-
ուի : Այս ամէն խնդիրները
անշուշտ կը լուծուին, ու ամէն
անոնք որ անդահախնդրաբար ազ-
գին ծառայել կուզեն, կ'օգտուին
այս փորձառութիւնէն : Մերաւիր
բարեներս, կը սպասեմ երկտող
պատասխանի մը :

Արի. Արիխարեան
Յ. Կ. պ. Ա. . . եանին բարե-
ներս, շուտով պիտի գրեմ իրեն :

Daily Express-ի մէջ արտա-
պուած կը տեսնենք «Երազմու-
թիւն»ի թիւ 19-ին մէջ հրատա-
րակուած Սաղունի նամակին այն
մասը, որ մեր ողբացեալ ընկե-
րը մեզի կը տեղեկացնէր Ալթա-
րիստներու դաւադրութիւնները
Հնչակեան գործիչներու կեան-
քին գէ՞մ :



Հ Ն Չ Ա Կ Ե Ա Ն
Շ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Ա Յ Ի Ն Ժ Ո Ղ Ո Կ

Ամսոյս 16-ին, Կիրակի օր,
տեղի պիտի ունենայ Հնչ. հրա-
պարակային ժողով մը, ուր պի-
տի բանախօսէ պ. Հրահատ կամ
օար'նիթ ունենալով ո՛չայ յե-

փոխութեան ներ'այ կայն թիւ-
նը :

Այս մասին առանձինն պիտի
յայտարարուի :

Հնչ. Կուսակ. — Խան
Ռուստի Մասնաձայն

Սօֆիայի Հնչ. Մասնաձայնը
կը ծանուցանէ՝ թէ ամսոյս 2-ին
կայացած հրատարակային ժողո-
վէն յետոյ բացուած հանդանա-
կութեան արգելները եղած է 400
ֆրանք :

Հ Ս Տ Կ Ա Ր Գ Ի Գ Ա Տ Մ Ը
Ն Ա Մ Ա Կ Ի Մ Բ Ա Ս Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

Վառնա հրատարակող «Իրա-
ւունք» թերթի մէջ «անտեղի դատ
մը» վերնագրով յօդուած մը լոյս տե-
սաւ, որով յօդուածագիրը ինքնակոչ
կերպով, բարեացակամ խորհրդատուի
մը նման, շարք մը առիակ դատար-
կաբանութիւններէ յետոյ կ'ըսէ, որ այս
տեսակ «անիմաստ և անպատուաբեր»
դատէ մը ես կենամ :

Շիտակը ըսելով չէի ուզեր, գո-
նէ, մինչև դատին վերջնալը, հրա-
պարակ գալ և ո՛րեւէ խօսք ըսել : Աս-
կայն յիշեալ յօդուածը կարգաւոր ա-
կառնայ մտածեցի թէ ինչո՞ւ այս խոր-
հրատուին «գող պատգամաւոր» յօդ-
ուածը հրատարակել առաջ չուզեց այս
զեղեցիկ խորհուրդները տալ ինձ : Ար-
գարեւ, եթէ «Իրաւունք»ը համոզ-
ուած էր որ գող մը չէի, ինչո՞ւ, փո-
խանակ խնդրը լաւագոյնս ճշգրտու-
հրատարակ նետուեցաւ : չէ՞ որ անի-
կա գրեմք որ ես պատգամաւոր ընա-
րուած եւ գացած էի Հնչ. Պատգ.
ժողովին :

Չէ՞ր կարող այդ խնդրը կամ
նամակը ներկայացնել պատգամաւորա-
կան ժողովին և այնտեղէն սպասել
խնդրին լուծումը : Այ, այդ բանը չէր
ընել, քանի որ այդպիսի բարի տըր-
մադրութեան արգելներ չէր «գող պատ-
գամաւոր» յօդուածը, ընդհակառակը,
առիակ բղխած էր սեւ սրտէ եւ դառ-
նացած հոգիէ մը, որ ետ կեցած չէր
եւ չէր ալ կենար սեւէ ստոր միջոցէ
մը՝ արատաւորելու Հնչ. պատգամա-
ւորական ժողովը և կամ նետելով
գայթակղութեան քար մը՝ նպատակ
ինչ ինչ բարդութիւններու : Այո՞, ես
շատ լաւ կը ճանչնամ այդ հոգիները,
հոգիներ, որոնք միայն սեւ օձերու
բոյն են և միշտ ալ պիտի լինին :
Այո՞, գիտեմ, պ. Խմբագիր, ձեր ներ-
կայ փոքի ցաւը, սակայն առայժմ կան-
գնել չեմ ուզեր ստոր վրայ, միայն
կը յայտնեմ որ երբ դատարանէն առա-
ջին անգամ ինձ հրաւէր եկաւ, ես ան-
պատասխանի թողուցի և ուղեցի որ
խնդրը քննուի նախնայ. դատարա-
նին առջեւ, վստահ ըլլալով որ ճըշ-
մարտութիւնը իր կարգին կուգայ խի-
զախօրէն ցցուելու շարք մը մարդոց
առջեւ, որոնք «Իրաւունք» անիւրա-
ւէն զատելու ընդունակութիւն իսկ
չունին :

Ես չեմ կրնար հանդուրժել այն-
պիսի խնդրիչներու, որոնք ընկերա-
կան եւ կուսակցական շարքերու մէջ
խրատումներ կամ բաղխումներ յառաջ
բերելու բնոյթն ունին :

«Իրաւունք»ը զիտնալու էր որ կը
գտնուի այնպիսի երկրի մը մէջ, ուր
օրէնքը չի թողուր որ անհասնելու
պատուը ոտնակոխ ըլլայ և որ մա-
մուլն ալ անհարձակ կերպով մէկուն
«գող» և միւսին «աւազակ» անուա-
նէ հրատարակուի :

Վերջապէս կը յայտարարեմ որ
պէտք չունիմ այս տեսակ բարի խոր-
հուրդներու : Ես ինքս շատ լաւ կը
հասկնամ թէ ինչ է պատուը և ինչ-
պէս պէտք է գայն պաշտպանել, ի
հարկին նոյն իսկ հրատարակուի :
11 նոյ. 903
Պետրոս Գալպոյան

Ք Ր Օ Ն Ի Կ

Վերջըս Թրանսպի մէջ մըտ-
քերը զբաղեցնող կարևոր խնդրի-
րը կրթական նոր օրինակ իծն է :

Կրթական խնդրի մասին Թր-
անսպիական քաղաքական կուսակ-
ցութիւններու մէջ երկու հոտանք
կայ : Մէկ մասը կրթութեան
ազատութիւնը կը պահանջէ, իսկ
միւս մասը այն կարծիքէն է որ
կրթական միաբանութեան ձևու-
քէն խելու համար նախնական,
նոյնիսկ միջնակարգ կրթութեան
գործը, պէտք է կրթութիւնը
պետական մենաշնորհի (monopole)
վերածել :

Այս երկու հակադրուող կար-
ծիքները այժմ խիստ բաղխման
ենթակայ են Թրանսպիական Թերա-
կոյտին մէջ, ուր տեղի կուսակցի
կրթական նոր օրինագծի վիճա-
բանութիւնը :

Քուէարկուած է արդէն շըն-
չումը Թարուի կրթական օրէն-
քին, որ կրթական միաբանու-
թիւններու նպատաւոր տրամադ-
րութիւններ կը պարունակէր :

— Մակեդոնական բարենորո-
գումներու նոր ծրագիրը կը շա-
րունակէ գիւնագիտական ան-
վերջ բանակցութեանց առարկայ
ըլլալ : Այդ ծրագիրը իր նա-
խորդին պէս դատապարտուած է
մեռելու տառ մնալու, քանի որ
Եւրոպական տէրութիւնները տը-
րամադրութիւն ցոյց չեն տար
խիստ միջոցներու գիմն թուր-
քիոյ հանդէպ :

Գծադրութիւնը հոն է որ
Եւրոպական միջամտութիւնը փու-
թացելու համար Մակեդոնական
ժողովուրդը պիտի ստիպուի կըր-
կին զէնքի գիմնելու և անհամե-
մատ նորանոր զոհեր տալու :

Յայտնի է ընթացողներուն
թէ Սարաֆով արտակարգ ընդու-
նելութեան և մեծ պատուի ար-
ժանացաւ հասարակութեանէն : Սօ-
ֆիայի մէջ՝ երբ կուուի դաշտն
կը դառնար :

Բնականաբար հաւրենիքի հա-
րադատ զաւկին համար եղած այդ
համակրական ցոյցերը պատիւ կը
բերեն պուլխար ազգին, մինչդեռ
մեր մէջ, հայրենիքի անձնուէր
զիտուորը ու հասարակական մշակը
զրպարտութեան և թշնամանան-
քի կենթարկուին հասարակու-
թեանէն :

— Վիեննայի մէջ գումար-
ւած է Աւստրիական Սոցիալիս-
տական կուսակցութեան համաժող-
ովը, որուն պիտի վերադառ-
նանք յաջորդիւ : Մրախ